



## ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻ Հովիտ՝ Վեր. Տիգրան Ծանլեան

Տարի 10, Թիւ 101 Յունուար 2002

### ՆՈՐ ՏԱՐԻ

*«Ինչ որ եղած է, նոյնը պիտի ըլլայ. ու ինչ որ գործած է, նոյնը պիտի գործուի. եւ արեւուն տակ բնաւ նոր բան մը չկայ»:* Ժող. 1:9

**Ի**նչ նորութիւն կայ. նորութիւն կա՞յ արդեօք:  
Օրացոյցի թերթիկները կը փոխուին, թուանշաններ կը մեծնան, տարիները կը սահին, ու տարեդարձները կ'անցնին:  
Ահաւասիկ տարի մըն ալ իր մայրամուտին մէջ է:  
Ի՞նչ տարբերութիւն հինի եւ նորի միջեւ:  
Տարբերութիւնը ակնթարթ մըն է. շատ կարճ ասուպային պահ մը:

#### 1. Նորութիւնը փոփոխութիւն է —

Երբ փոփոխութիւն չկայ, նորութիւն չկայ:  
Արտաքննապէս փոփոխութիւններ շատ են. թուականներ, հագուստներ, տուններ, ինքնաշարժներ, որոշումներ եւ յարաբերութիւններ: Սակայն ասոնք վաղն իսկ հին կ'ըլլան:  
Մենք կը վախճանք նոր-էն, որովհետեւ նորը կը փոխէ:  
Հիւանդ մարդ մը կար, ՅՑ տարիներ դատապարտուած էր մնալ իր անկողիին մէջ: Տարիներ կու գային ու կ'երթային. իրեն համար նորութիւն չկար:

Անհատներ կ'ուզեն հանգիստ մնալ հին կեանքով:  
Աստուած, նորութեան Աստուած է. ամէն բաները նոր ընող Աստուած է:

Ձայնը եկաւ հիւանդին, հարցումը ուղղուեցաւ: Նոր ձայն մըն էր, նոր լոյսով լեցուն, նոր լոյս ծագեցնող: Կ'ուզե՞ս առողջանալ. ահաւասիկ հարցում մը, նորութիւնով ու նորոգութիւնով լեցուն: Եթէ չենք փոխուիր, նորութիւն չկայ:

#### 2. Նորութիւնը յաւիտեանականութիւն է —

Իսկական նորութիւնը չի հիմնար - անփոփոխ է: Վիճակ մը որ

Ժամանակի եւ տարածքի ազդեցութիւններէն անկախ է:

Նորութիւնը պատմութիւն մըն է, կը սկսի տիեզերքի, երկրի եւ մարդու ստեղծագործութեամբ ու կը շարունակուի մարդուն սայթաքումով, ու Յիսուսի ծնունդը նորութեան յոյս կու տայ ինկած մարդուն: Նորութիւն մը որ նման չէ հինցող նորութիւններու:

Նորութիւն մը որ միշտ նոր է:

Տարին ոչ էս է: Մեր կեանքերը անցան, արդէօք լացին՞ք, որովհետեւ ժամեր առաջ մեր կեանքին մէկ մասը թաղեցինք:

Հաշիւներ մաքր՞ւր են, Աստուծոյ, բարեկամներու եւ հարազատներու հետ:

Արցունքներ սրբե՞ցիր թէ լացուցիր. նկարագիր շինեցի՞ր թէ անկում ունեցար:

Ի՞նչ է կեանքը - ոմանց համար պայքար, ուրիշներու համար վայելք, իսկ տակաւին ուրիշներու համար անեղծուած: Իսկ Յիսուս կ'ըսէ. Եւ եմ:

Բայց կեանքին արժէքը, անոր երկարութեան մէջ չկայանար, ոչ ալ հարստութեան, հաճոյքներուն եւ դիրքին մէջ:

Կեանքը, կեանք կ'ըլլայ ու արժէք կ'ունենայ երբ աստուածահաճոյ կերպով կ'ապրինք ու կը գործածենք:

Ահաւասիկ Աստուծոյ շնորհած նոր տարին ծայրէն բռնած էս, զայն արժէք ունեցող տարի մը ըրէ: Օրերդ իմաստութեամբ ապրէ ու վայրկեաններդ Տիրոջը համար գործածէ:

Եւ վերջապէս զուգադիպութիւն չէ, այս նոր տարուան շրջանը Ծնունդի հետ ըլլալուն: Մէկ ճշմարտութիւն կայ, առանց Ծնունդի նոր տարի չկայ. առանց փոփոխութեան նորութիւն չկայ ու հոգեւոր փոփոխութիւնը լաւիտենականութիւն է:

Յայտնութիւն 21:5-ի մէջ կը կարդանք.

Ան որ աթոռին վրայ կը նստէր ըսաւ. Ահա ամէն բաները նոր կ'ընեն: Ինք կ'ընէ... ու Աստուած մեզի հետ:

---

## ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒՆԻ ՀԵՏԵԻԵԱԼ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԸ

Կիրակի - Առաւօտեան 11-ին Պաշտամունք  
Մանուկներու Կիրակնօրեայ

Երեքշաբթի - Երեկոյեան 7-ին Սերտողութիւն  
Հինգշաբթի - 7-ին Երիտասարդաց Սերտողութիւն  
8:30-ին Երգչախումբի Փորձ

Ուրբաթ - Առաւօտեան 10-ին Քոյրերու Ժողով  
7-ին Պատանեաց

Ծաբաթ - Ամէն Ամսուայ Վերջին Ծաբաթը Երեկոյեան  
7-ին Երիտասարդ Զոյգերու Ժողով

# ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՏԷՐՈՋ ՓԱՌՔԻՆ ՀԱՄԱՐ

- Հովիւը, Գալուստ եղբայր Մարկանեանի հետ այցելեց Երուսաղի Արարատ Աւետարանական եկեղեցին: Անոնք հոն էին 13-17 Դեկտեմբեր. ըրին այցելութիւններ, ու գտան Գեորգ եղբայրն ու Անուշ քոյրը բաակական կազմութեամբ վիճակի մէջ: Հովիւը հանդիպեցաւ նաեւ հոգաբարձութեան հետ: Զիւնը ամէն կողմ ծածկած էր, ու յիշեցինք՝ թէ Տէրը մեզ ձիւնէն աւելի մաքրու ու ներմակ ըրած է: Մեր աղօթքներով զօրակիզ ըլլանք Տիրոջ գործին Երուսաղի մէջ:
- Դեկտեմբեր 21-ին եկեղեցւոյ ծառայակիցներով փառաոր ընծիրք մը ունեցանք: Այլեւս սովորութիւն եղած է, ամէն տարի Ծննդեան օրերուն միատեղ ըլլալ ու փառք տալ Աստուծոյ, այն սքանչելի աղիթներուն համար որոնք տրուած են մեզի ծառայելու մեր Աստուծոյն: Նախ ընթերցեցինք... տեղը նեղ էր, բայց սրտերը լայն: Ապա պաշտամունք, օրումն պատգամը երեցներէն, Յովսէփ եղբայրը մատուցեց եւ Յակոբ եղբայրը թարգմանութիւնը:
- Ծնունդի Կիրակին Դեկտեմբեր 23-ին կիրակնօրեայ դպրոցի աշակերտները կենդանի պատկերներ ներկայացուցին եւ ստաջին անգամ ըլլալով Դաիթն ու Լեւոնը նուագեցին ու երգեցին: Իսկ երեկոյեան Միհրան եղբայր Գնանեանի ստաջնորդութեամբ եղաւ ճոխ յայտագիր մը մեներգ, խմբերգ, նուագ, զուգերգ եւ ասմունք: Տէրը փառատրուեցաւ ու մենք օրհնուեցանք: Վերապատուելի Մաթոսեանի տպաորիչ պատգամը ամէն բան համեմտեց:
- Մեր պատանի-երիտասարդները պատրաստակամ եղան հրեշտակներու դերը կատարելու եւ 24-ի իրիկունը անտեղու Փրկչին ծնունդը: Անոնք ոչ թէ միայն անտեցին, այլ նաեւ բերին նուերներ: Աստուած օրհնէ իրենց ջանքերը եւ ստաջնորդէ մաքրու, նուիրում կեանք մը ապրելու:
- Յունուարի առաջին Կիրակին, Հայկական Ծնունդի աղիթով ծրագրուած է միացեալ պաշտամունք Բասստենայի Կիլիկիա Աւետարանական եկեղեցաշէնքէն ներս: Միացեալ երգչախումբի համար ջանքեր կը թափուին: Բոլորս հրապիրում ենք հոն ըլլալու երեկոյեան 7-ին:
- Յունուար 9, 10 եւ 11 Աւետարանական Միութիւնը կազմակերպած է հովիւներու համագումար մը, որուն տիկիւններն ալ կրնան մասնակցիլ: Դժբախտաբար մեր հովիւը պիտի չկրնայ ներկայ ըլլալ:
- Յունուարի երկրորդ Կիրակին 13-ին նախապէս եղած կարգադրութեամբ, Վեր. Ժիրայր Սողոմեան պիտի ըլլայ մեր պատգամաբերը: Վերապատուելի Աւետանաչականի գործադիր տնօրէնն է: Նախապէս այս պաշտօնին կը ծառայէր Վեր. Մովսէս Ծանապագեան որ երկնագնաց եղաւ: Աղօթող ենք որ այս Տիրոջ ծառային խօսքերն ու գործերը Աստուծոյ փառք բերեն. մասնաւոր օրհնաբեր ըլլալ պատգամը մեր բոլորին:
- Թանկագին եւ պատակական քոյր մը, Մարի Այմոյեան երկար պանդխտական տարիներ բոլորելէ ետք երկնագնաց եղաւ: Յուշարկաւորութեան պաշտամունքը կատարուեցաւ Վեր. Յովսէփ Մաթոսեանի եւ մեր Հովիւին կողմէ Դեկտեմբեր 24-ին Ռոգ Հիլզ գերեզմանատան մէջ: Նոյնիսկ ծերութեան մէջ բերան գործունէութիւն ունեցած էր Տիրոջը դաշտին մէջ, յատկապէս թարգմանութիւններ կատարելով: Տէրը քրոջ յիշատակը վառ պահէ:

## ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

- ◆ *Ով որ եղբայրասիրութիւն ունի իր սրտին մէջ, միշտ բան մը կը գտնէ ուրիշին տակու:*
- ◆ *Ինչ որ կը մխիտել, կ'անհետանայ, ինչ որ ունիս, ուրիշներուն կը մնայ, ինչ որ տոտի, այդ ինձի մնաց:*
- ◆ *Աւելի կարեւոր է մանուկ մը կրթել, քան թէ պալատ մը կառուցել:*
- ◆ *Ինչ որ կ'ընես այսօր Բրիտանոսի համար, վաղը յաիտենականութեան մէջ անպայման պիտի վարձատրուի:*
- ◆ *Աստուած կ'ընտրէ թէ ինչ բաներէ պիտի անցնիք, իսկ մենք կ'ընտրենք ինչպէս պիտի անցնիք:*

# ԺԱՄԱՆԱԿ

Չենք կարող բռնել  
Սահում են ժամերն  
Պետք է շուտ անենք,  
Թույլ տուր պատրաստվենք  
Ահեղ Թագավոր  
Երբ ժամանակը հասնի  
Դու գաս մեզ այցի  
Մեզ պատրաստ գտնես,  
Օգնիր, որ մաքրենք  
Մեր սիրտն ու հոգին  
Դառնանք սպիտակ  
Զյունից ավելի  
Որ կարողանանք  
Մուտք գործել երկինք:

Ծնորհիկ քյոյր Ղազարեան  
Արարատ Աւետ. Եկեղեցի  
Եւթա

## ԵՐԿՆԱՅԻՆ ՆՎԵՐ

Աստղերի մի խումբ  
Լույսերի մի փունջ  
Հրեշտակային երգով  
Երկնքից եկան  
Մեր վրա իջան.  
Ծնունդի առթիվ  
Երկնքից նվեր  
Նրանք բերեցին  
Եվ մեզ բոլորիս  
Օրհնանք տվեցին.  
Հրեշտակներն ապին  
Հիսուսի մոտից ենք  
Հիմա մենք գալիս  
Նա որ ձեզ գնեց  
Մի նվեր դրկեց.  
Իր անսահման սերը  
Հույսի պարգևը  
Առեք վատեք  
Բայց պատրաստ եղեք  
Գալու է շուտով  
Որ տանի իր հետ:

Ծնորհիկ քյոյր Ղազարեան

---

### Armenian Evangelical Brethren Church

3200 London St., Los Angeles, CA 90026

(213) 483-7265 / Fax (213) 483-7002

Internet: [www.aebcm.org](http://www.aebcm.org) – E-mail: [aebcministries@aol.com](mailto:aebcministries@aol.com)